Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 37-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Նարինե Մնացականի Հովհաննիսյանի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի դիմումը ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին (համայնքապետարանում մուտքագրված թիվ 27198 թվագրությամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 26-ի «Հոգաբարձություն և խնամակալություն սահմանելու, քաղաքացի Նարինե Մնացականի Հովհաննիսյանին իր թոռների՝ Վերոնիկա Կարենի Բեգլարյանի և Լիլիթ Կարենի Բեգլարյանի նկատմամբ հոգաբարձու և խնամակալ նշանակելու վերաբերյալ» թիվ 889-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարինե Մնացականի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

X



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » հունվարի 2023 թվականի N 3/90-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023
ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 2782-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Քաղաքացի Աիդա Աշոտի Էլոյանին պատկանող Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի 1-ին շարք N 3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 78,61 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1(մեկ) պատուհանը և 1(մեկ) դուռը, ինքնակամ փակված 2 (երկու) պատուհանը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 28,51 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2782-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 15/12/2023 թվականի N Կ-15122023-08-0178 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Քաղաքացի Աիդա Աշոտի Էլոյանին պատկանող Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի 1-ին շարք N 3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 78,61 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1(մեկ) պատուհանը և 1(մեկ) դուռը, ինքնակամ փակված 2 (երկու) պատուհանը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 28,51 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2782-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
 - 1) վերնագրում <<78,61(յոթանասուներեք ամբողջ վաթսուամեկ հարյուրերորդական)>> թիվը և քառերը փոխարինել <<77,29(յոթանասուներեք ամբողջ քսանինը հարյուրերորդական)>> թվով և քառերով.
 - 2) որոշման 2-րդ կետում <<76,95 (յոթանասունվեց ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական)>> թիվը և քառերը փոխարինել <<75,63(յոթանասունհինգ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական)>> թվով և քառերով .
 - 3) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023 թ. ԾԱԾԿԱԳԻՐՔ>> բառերը և թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

X 



ԿԱՄԱՄՈՆՅԱՆ

Բ. Գյումրի
2023 թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբեր 2023 թվականի N 3189Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈՒՄ-14 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ
ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-14 տարեկան պատանիների 2023 թվականի դեկտեմբերի 24-ին Երևան քաղաքում կայանալիք առաջնության հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-14 տարեկան պատանիների առաջնության հերթական տուրին մասնակցելու համար 2023 թվականի դեկտեմբերի 24-ին քաղաք Երևան գործուղել թվով 11 մարզիկի և 1 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ.ԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
օգոստոսի 20 N 3189-Ա որոշման



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Բասկետբոլի Մ-14 տարեկան պատանիների առաջնության հերթական տուրին
մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների

1. Նահապետյան Էդգար - մարզիկ,
2. Սիմոնյան Վաղինակ - մարզիկ,
3. Մելոյան Գարիկ - մարզիկ,
4. Մուրադյան Գագիկ - մարզիկ,
5. Աթոյան Սևակ - մարզիկ,
6. Ադամյան Հենրի - մարզիկ,
7. Ֆյիկյան Արեգ - մարզիկ,
8. Մահտեսյան Ավետիս - մարզիկ,
9. Դանիելյան Սամվել - մարզիկ,
10. Հովհաննիսյան Գոռ - մարզիկ,
11. Դեմիրճյան Լևոն - մարզիկ,
12. Հարությունյան Արտակ - մարզիչ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » օգոստոս 2023 թվականի N 3188Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈԼԵՅՔՈԼԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի պատանիների 2023 թվականի դեկտեմբերի 26-28-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով վոլեյբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի պատանիների առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի դեկտեմբերի 26-28-ը քաղաք Երևան գործուղել թվով 8 մարզիկի և 1 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՍԱՄՍՈՂՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
դեկտեմբերի 20-ի N 3188 որոշման



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Վոլեյբոլի պատանիների առաջնությանը մասնակցող Գյումրու հավաքական թիմի
անդամների

1. Նորյան Արմեն – մարզիկ,
2. Դարբինյան Դավիթ – մարզիկ,
3. Աղանյան Վարուժան – մարզիկ,
4. Իգիթյան Ռաֆիկ – մարզիկ,
5. Գրիգորյան Մկրտիչ – մարզիկ,
6. Պետրոսյան Շավարշ – մարզիկ,
7. Դեմիրճյան Արման – մարզիկ,
8. Առաքելյան Մարտին – մարզիկ,
9. Մանուկյան Եղիշեն – մարզիչ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբեր 2023 թվականի N 3187 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՂԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ
ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության լողի ֆեդերացիայի գավաթի 2023 թվականի դեկտեմբերի 22-24-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով լողի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության լողի ֆեդերացիայի գավաթի առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի դեկտեմբերի 22-24-ը քաղաք Երևան գործուղել թվով 13 մարզիկի և 2 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՄԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
դեկտեմբերի 2-րդ N 312/23 որոշման



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Լոդի ֆեդերացիայի գավաթի առաջնությանը մասնակցող Գյումրու հավաքական թիմի
անդամների

1. Վարոսյան Վլադիմիր – մարզիկ,
2. Սուվարյան Արեգ – մարզիկ,
3. Չախոյան Աշոտ – մարզիկ,
4. Գասպարյան Արման – մարզիկ,
5. Մետոյան Գեղամ – մարզիկ,
6. Պողոսյան Համլետ – մարզիկ,
7. Համբարյան Բորիս – մարզիկ,
8. Հարությունյան Գագիկ – մարզիկ,
9. Տոնոյան Անժելա – մարզիկ,
10. Սիմոնյան Մելանյա – մարզիկ,
11. Խաչատրյան Մարի – մարզիկ,
12. Ղալաջյան Ալեն – մարզիկ,
13. Սարգսյան Հեղինե – մարզիկ,
14. Մելքոնյան Հովհաննես – մարզիչ,
15. Մխիթարյան Հրանտ – մարզիչ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբեր 2023 թվականի N 3186-Ա

**ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՇԱԽՄԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՄՐՑԱՇԱՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ելնելով Անդրանիկ Մարգարյանի հիշատակին նվիրված շախմատի 2024 թվականի հունվարի 9-16-ը Երևան քաղաքում կայանալիք միջազգային մրցաշարին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով շախմատի ֆեդերացիայի 2024 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Անդրանիկ Մարգարյանի հիշատակին նվիրված շախմատի միջազգային մրցաշարին մասնակցելու համար 2024 թվականի հունվարի 9-16-ը քաղաք Երևան գործուղել թվով 10 մարզիկի և 2 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Անդրանիկ Մարգարյանի հիշատակին նվիրված շախմատի միջազգային մրցաշարին
մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների

1. Քոչարյան Սոնա- մարզիկ,
2. Քոչարյան Սամվել- մարզիկ,
3. Շահվաղյան Սամվել- մարզիկ,
4. Պետրոսյան Արտյոմ - մարզիկ,
5. Եղիկյան Նարեկ- մարզիկ,
6. Ալեքսանյան Արեկ - մարզիկ,
7. Զաքարյան Սամվել - մարզիկ,
8. Թորոսյան Վալոդյա - մարզիկ,
9. Գևորգյան Նոանե - մարզիկ,
10. Մարգարյան Վրեժ - մարզիկ,
11. Մարտիրոսյան Անի - մարզիչ,
12. Օհանյան Էմմանուել- մարզիչ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Բաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ ՊԱՐՈՒՅՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«20» «Գ.Լ.Ֆ.Կ.Ն.Ը.Բ.Դ.Զ.» 2023թվական N 3185-Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով Օրենսգրքի 219.1 հոդվածով, 2023թվականի դեկտեմբերի 19-ին Գյումրի քաղաքում, դոնրաց վարույթի ընթացքում, քաղաքացի Պարույր Խաչատուրի Հովակիմյանի, ինչպես նաև քաղաքացի Հրանտ Նորայրի Մարտիրոսյանի լիազորված անձ՝ Հ. Գալստյանի մասնակցությամբ, Օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի նոյեմբերի 7-ին կազմած քաղաքացի Պարույր Խաչատուրի Հովակիմյանի կողմից Օրենսգրքի՝ 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի:

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023թվականի դեկտեմբերի 19-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի Պարույր Խաչատուրի Հովակիմյանի կողմից Գյումրի քաղաքի, Շահումյան փ. թիվ 67 և Շահումյան փողոց թիվ 65 հասցեների սեփականատերերին համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասում (հիմք՝ անշարժ գույքի

նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29052023-08-0050 վկայական), ինքնական շինարարական աշխատանքներ են իրականացվել, այսինքն կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի Պարույր Խաչատուրի Հովակիմյանը վարույթի ժամանակ հայտնեց, որ նշված հասցեում իր կողմից շինարարական աշխատանքներն իրականացվել դեռևս 2023թվականի ամռանը:

Վարույթի լուսմներին ներկայացված փաստաթղթերի, մասնավորապես տվյալ տարածքի չափագրման ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ինքնական շինարարական աշխատանքներն իրականացվել են նաև համայնքապատկան հողամասի վրա, այսինքն առկա է արարք նախատեսված Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ 8) կանխարգելում ու կասեցնում է ինքնական շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Ի նկատի ունենալով վերոգրյալը գտնում են, որ առկա է Օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք, համաձայն որի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելու դեպքում:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 35-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Քաղաքացի Պարույր Խաչատուրի Հովակիմյանի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը տույժի մասով կարճել:

2. Պարտավորեցնել քաղաքացի Պարույր Խաչատուրի Հովակիմյանին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ինքնական շինարարության հետևանքների վերացումը:
3. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել կողմերին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ ծանուցման պահից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

 Недействительная ссылка

X

4. Սամսոնյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 19 » դեկտեմբեր 2023 թվականի N 3184Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐՂԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՎՏՈՔՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով՝ ավտոբուսների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

- 1) Մենուա Մկրտչյան – համայնքի ղեկավարի օգնական,

Հանձնաժողովի անդամներ՝

- 2) Արամ Սարուխանյան – համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ,
- 3) Խաչատուր Սուլթանյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ
- 4) Մանե Վարդանյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,
- 5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

- 6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



X

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
 Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
 էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 19 » դեկտեմբեր 2023 թվականի N 3183-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ ԶԵՌՔԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՎ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով ավտորուների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. Ռոբերտ Անդրիասյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

բ. Գագիկ Ավետիսյան - համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



X Ս. Սարգսյան

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ծաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԱՆՈՒՇԱՎԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«19 օգոստոսի» 2023 թվական N 3182 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219՝ հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 14-ին, ժամը 15:10-ին, Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, Անուշավան Սամվելի Խաչատրյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ավզնոց 79, անձնագիր՝ AR 0207589) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի նոյեմբերի 30-ին կազմած, քաղաքացի Անուշավան Սամվելի Խաչատրյանի կողմից օրենսգրքի՝ 162-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023 թվականի նոյեմբերի 30-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ա. Խնձրցյանի, Ռ. Կարապետյանի և Ա. Ղազարյանի կողմից կազմվել է արձանագրություն այն մասին, որ Անուշավան Սամվելի Խաչատրյանը

Գյումրի քաղաքի, Հաղթանակի պող., Պաբեդա խանութի դիմաց՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր:

Անուշավան Սամվելի Խաչատրյանը վարչական վարույթի լսումներին հայտնեց, որ զոջում է կատարված իրավախախտման համար և բացառելու է ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնելը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում մեղավորի անկեղծ զոջումը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ ենթակետի համաձայն վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառված վնասը կամավոր հանձնելը կամ վերացնելը:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-մասի «ա» կետով, 3-րդ մասով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ ենթակետերով, 282-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, 293-րդ հոդվածի 3-րդ ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Անուշավան Սամվելի Խաչատրյանի նկարումամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Անուշավան Սամվելի Խաչատրյանին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:
3. Անուշավան Սամվելի Խաչատրյանին իրազեկել հետազայում նմանօրինակ իրավախախտում կատարելու հետևանքների մասին:
4. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել Անուշավան Սամվելի Խաչատրյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անուշավան Սամվելի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

28.12.2023



[Handwritten signature]

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՎԱՀԱՆ ԱԶԱՏԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«19» սեպտեմբեր 2023 թվական N 3181 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219՝ հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 14-ին, ժամը 12:15-ին, Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, Վահան Ազատի Մելիքյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ա. Խաչատրյան 2/49, անձնագիր՝ AS 0625252) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հոկտեմբերի 27-ին կազմած, քաղաքացի Վահան Ազատի Մելիքյանի կողմից օրենսգրքի՝ 162-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023 թվականի հոկտեմբերի 27-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Մ. Վարդանյանի, Ռ. Կարապետյանի և Ռ. Պետրոսյանի կողմից կազմվել է արձանագրություն այն մասին, որ Վահան Ազատի Մելիքյանը Գյումրի

քաղաքի, Շիրակացի 56 և 54 շենքերի հարևանությամբ՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր:

Վահան Ազատի Մելիքյանը վարչական վարույթի լսումներին հայտնեց, որ զղջում է կատարված իրավախախտման համար և բացառելու է ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնելը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում մեղավորի անկեղծ զղջումը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ ենթակետի համաձայն վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառված վնասը կամավոր հանձնելը կամ վերացնելը:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-մասի «ա» կետով, 3-րդ մասով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ ենթակետերով, 282-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, 293-րդ հոդվածի 3-րդ ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վահան Ազատի Մելիքյանի նկարումամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Վահան Ազատի Մելիքյանին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:
3. Վահան Ազատի Մելիքյանին իրազեկել հետազայում նմանօրինակ իրավախախտում կատարելու հետևանքների մասին:
4. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել Վահան Ազատի Մելիքյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահան Ազատի Մելիքյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:



06.12.2023

X.

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՄԼԵՏ ՄԱՆՎԵԼԻ ԾԵՐՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԶԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի պետի ժ/պ՝ Ս. Խաչատրյանը, աշխատակիցներ՝ Ա. Խնձրցյանը, Ռ. Կարապետյանը և Ա. Ղազարյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կոմայրիի բաժնի աշխատակիցներ՝ Գոռ Հարությունյանը, Սամվել Գասպարյանը և Տիգրան

Վարդանյանը իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս՝ 2023 թվականի նոյեմբերի 30-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմվել են քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանի կողմից Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը:

2023 թվականի նոյեմբերի 30-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանը առանց համապատասխան թույլտվության Գյումրի քաղաքի Բագրատունյաց հրապ., Վազա Ֆարմ դեղատան դիմաց՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր, այսինքն, քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանը վարչական վարույթի լսումների՝ օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովվել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանը հրաժարվեց արձանագրությունը ստորագրելուց և ստանալուց:

Քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի նոյեմբերի 30-ին պատշաճ կարգով կազմված արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Օրենսգրքի 162 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի ոլորտում:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված են համարում այն փաստը, որ քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 162-րդ հոդվածի 1-ին մասով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ

օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի՝ 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանին սույն որոշումը ստանալուց հետո բացառել՝ Գյումրի քաղաքի տարածքում ոչ սահմանված վայրում առանց թույլտվության առևտրի իրականացումը:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Համլետ Մանվելի Ծերունյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
7. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:



18.12.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 19 » սեպտեմբեր 2023 թվականի N 3149-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ԻԳԻԹԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԷԼԵԿՏՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ 9-ՐԴ ՇԱՐՔԻ N 12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 91.53 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 ԴՈՒՈՐ, 1 ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 ԴՈՒՈՐ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 43.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գայանե Իգիթի Հարությունյանին ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր N 5446) Գյումրի քաղաքի էլեկտրոտեխնիկական 9-րդ շարքի N 12 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 81.77 (ութսունմեկ ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 13.05 (տասներեք ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 9.76 (ինն ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն, ինքնակամ բացված է 1 (մեկ) դուռ, 1 (մեկ) պատուհան, ինքնակամ փակված է 1 (մեկ) դուռ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 43.73 (քառասուներեք ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա բնակելի շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023DDYWSC, N 2023XK2LPC և N 2023WT72Q3 ծածկագրերով:

Քաղաքացի Գայանե Իգիթի Հարությունյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինության նկատմամբ Գայանե Իգիթի Հարությունյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, 22.1-րդ կետի, 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Իգիթի Հարությունյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 19-ին N 22689 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Գայանե Իգիթի Հարությունյանի (ծնված 1967 թվականի ապրիլի 13-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրեն պատկանող, Գյումրի քաղաքի էլեկտրոտեխնիկական 9-րդ շարքի N 12 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 43.73 (քառասուներեք ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

